**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 02.04.2020թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ՍՑ-LO-2020/66

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ
Մասնակից՝ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Տ. Լաճիկյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով գնանշման հարցում, ծրագրային համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/3»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 03.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3154-2020 գրությամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

## ՊԱՐԶԵՑ

### 1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 26.02.2020թ.-ի թիվ 70/0226-01 գրության հիման վրա, 03.03.2020թ.-ին «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 03.03.2020թ.-ին:

04.03.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/66 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

09.03.2020թ.-ին և 02.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 02.04.2020թ.-ին:

### 2. «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ն 17.02.2020թ.-ի թիվ 70/0217-07 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

*«Հայտնում ենք, որ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/3 ծածկագրով ծրագրային համակարգի սպասարկման ծառայությունների գնման ընթացակարգում «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և վերջինիս հետ 2019 թվականի դեկտեմբերի 26-ին կնքվել է պայմանագիր, այնուհետև համաձայնագիր:*

*Սույնով տեղեկացնում ենք, որ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի և «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ի միջև կնքված ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/3 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծվել է՝ ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով:»:*

Պատվիրատուն 26.02.2020թ.-ի թիվ 70/0226-01 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է տրամադրել է «ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով պայմանագիրը և համաձայնագիրը:

Ընթացակագրի քննության ընթացքում Պատվիրատուն 11.03.2020թ-ին թիվ 70/0311-04 գրությամբ ներկայացնելով լրացում հայտնել է նաև հետևյալը.

*« 1. Կնքված պայմանագրի ինչպես նաև կնքված համաձայնագրի Հավելված 1-ում հստակ նշված է ծառայությունների մատուցման վայր՝ ք. Երևան, Բյուզանդ 1/3 հասցե: Հավելված 1-ի տեխնիկական բնութագրում մեկ անգամ ևս հաստատվել է, որ առկա իրավիճակից ելնելով Պատվիրատուն պահանջելու է նշված ծառայությունները մատուցել նշված հասցեում Պատվիրատուի գրասենյակում: Ավելին՝ ըստ տեխնիկական բնութագրի ծառայությունները պետք է մատուցվեն 24/7 ռեժիմով: Նշված պահանջների մասին բանավոր տեղեկացվել է բոլոր մասնակիցներին մրցույթի օրը, ինչպես նաև Կատարողին առանձին գրություններով:*

*2. Պատվիրատուի կողմից 26.12.2019թ. ուղարկվել է գրություն Կատարողին, որպեսզի տրամադրի Պայմանագրով սահմանված աշխատակիցների տվյալները մուտքի համար անցագրեր պատրաստելու համար, որին ի պատասխան 30.12.209թ. գրությամբ Կատարողը հրաժարվել է տրամադրել և հայտնել է, որ նշած հարցի քննարկումը պետք է իրականացնել Պայմանագրի համաձայնագրիրը կնքելուց հետո:*

*3. Պայմանագրի համաձայնագիրը կնքվել է 05.02.2020թ. և նույն օրը Պատվիրատուն ուղարկել է գրություն կատարողին: (Պատվիրատուն Կատարողին ծանուցել է 05.02.20թ.) պահանջելով տրամադրել աշխատակիցների մասին տեղեկատվությունը, հիշեցրել է, որ պայմանագրով պետք է իրականացնի նաև 24/7 ծրագրային համակարգի մոնիթորինգ և խնդրել տրամադրել պաշտոնական էլեկտրոնային հասցե և հեռախոսահամար Պայմանագրով սահմանված էլեկտրոնային տոմս բացելու և տեխնիկական խնդիրների մասին հայտնելու համար, որին ի պատասխան 11.02.2020թ. Կատարողը ուղարկել է գրություն հայտնելով, որ կատարողը անհրաժեշտություն չի գտնում*

*աշխատակիցներին գործուղել պատվիրատուի գործունեության հասցե և հայտնել է, որ Կատարողը ազատ է ծառայությունների մատուցման վայրի մասով կարգը ընտրելու:*

*4. 11.02.2020թ. Կատարողի գրության ուղարկման նույն օրը, Պատվիրատուն ուղարկել է գրություն Կատարողին (11.02.20թ. ծանուցվել է), որով հայտնել է, որ Կատարողը չի կատարել պայմանագրով ստանձնած պարտականություններից ոչ մեկը և Պատվիրատուի մոտ առկա են Արտակարգ և Բարձր կարևորության տեխնիկական խնդիրներ (նշված խնդիրների համար Պայմանագրով հստակ սահմանված են կարգավորման ժամկետներ և որոնց չկատարումը կարող է հիմք հանդիսանալ Պայմանագրի միակողմանի լուծման), որոնց սահմանված ժամկետում չկատարման դեպքում պայմանագրով սահմանված են տույժեր և տուգանքներ, ինչպես նաև ծառայությունների չկատարելու դեպքում կարող են առաջանալ իրավական հետևանքներ:*

*Հաշվի առնելով վերոգրյալը պարզ է դառնում, որ Կատարողը հրաժարվել է սահմանված ծառայությունները մատուցել Պայմանագրով սահմանված վայրում, ինչպես նաև Պատվիրատուի բազմաթիվ գրություններին, որ առկա են տեխնիկական խնդիրներ չի արձագանքել պատշաճ և չի իրականացրել Պայմանագրով սահմանված իր պարտականությունները:»:*

**3. <u>«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 03.03.2020թ.-ի գրությամբ դիմել է «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3154-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 09.03.2020թ.-ին հրավիրված նիստին՝ ներկայացնելով նաև դիրքորոշում:

Ներկայացված գրավոր դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

*««Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՅ-ԼՕ-2020/66 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ հայտնում ենք, որ պատվիրատու հանդիսացող «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի գործողություններն իրավաչափ չեն, խտրական են և*

*չկան բավարար հիմնավորումներ մեր ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար ներքոնշյալ պատճառաբանությամբ.*

*1. «ԱՅԹԻՐԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊ ընկերությունը 2019 թվականի դեկտեմբերի 26-ին «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ընկերություն) հետ կնքել է ծրագրային համակարգի սապսարկման ծառայությունների մատուցման թիվ ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/3 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) համաձայն որի ծառայությունների մատուցումը պետք է իրականացվեր ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպում կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանվող ժամկետում: Կողմերի միջև համապատասխան համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) կնքվել է 2020 թվականի փետրվարի 05-ին: Ուշադրության է արժանի այն փաստը, որ թե՛ պայմանագրի, և թե՛ համաձայնագրի մաս կազմող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում նշված է, որ առկա իրավիճակից կախված Պատվիրատուն կարող է պահանջել Կատարողից նշված ծառայությունները մատուցել իր կողմից տրամադրված աշխատավայրում..: Վկայակոչված պայմանագրային դրույթից հետևում է, որ ընկերությունը՝ «ԱՅԹԻՐԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊ ընկերության կողմից ծառայությունների մատուցումը իր աշխատավայրում կատարել պահանջելու իրավունք ունի միայն իրավիճակային անհրաժեշտության պայմաններում, այսինքն՝ Ընկերությունը չի կարող սեփական հայեցողությամբ, առանց անհրաժեշտության վերաբերյալ փաստական հիմնավորումներ ներկայացնելու պահանջել, որ «ԱՅԹԻՐԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊ ընկերության աշխատակիցները Պայմանագրով սահմանված ծառայությունները մատուցեն իր կողմից նշված հասցեում: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ նման ձևակերպումը գնման ընթացակարգի ցանկացած մասնակցի մոտ տպավորություն է թողնում, որ պատվիրատուն չի պահանջելու վերջինիս աշխատակացի մշտական ներկայությունը իր մոտ և մասնակիցը գնային առաջարկ ներկայացնելիս հիմնվում է այդ մոտեցման վրա, մինչդեռ, իմպերատիվ կերպով աշխատակցի մշտական ներկայությունը ձևակերպելու դեպքում մասնակիցների գնային առաջարկները էականորեն տարբեր կլինեին: Այնուամենայնիվ սույն գործի հանգամանքներից հետևում է, որ Ընկերության կողմից 26.12.2020 թվականին՝ հենց Պայմանագրի կնքման օրը, առանց անհրաժեշտությունը հիմնավորող որևէ փաստարկի «ԱՅԹԻՐԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊ ընկերությանը ներկայացվել է՝ Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկակաե բնութագրում նշված ծառայությունները Պատասխանողի տրամադրած Աշխատավայրում՝*

*ՀՀ, ք. Երևան, Բյուզանդի փ. 1/3 հասցեում կատարելու պահանջ, ինչպես նաև նշված աշխատակիցների աշխատանքային պայմանագրերի և հերթափոխերի վերաբերյալ տեղեկատվություն: Հատկանշական է, որ Ընկերությունը նշված պահանջի կատարման ժամկետ «ԱՅԹԻՐԵՍՈԻՐՍԻՍ» ՍՊ ընկերությունի չի ներկայացրել:*

*Ընկերության պահանջին ի պատասխան «ԱՅԹԻՐԵՍՈԻՐՍԻՍ» ՍՊ ընկերությունը նշել է, որ չունի առանց հիմնավորված անհրաժեշտության ծառայությունը ընկերության հասցեում մատուցելու պայմանագրային պարտավորություն և ընկերությանը խնդրել է նկարագրել այն դեպքերը ու իրավիճակները, երբ անհրաժեշտություն կլինի ապահովելու «ԱՅԹԻՐԵՍՈԻՐՍԻՍ» ՍՊ ընկերության աշխատակիցների ներկայությունը՝ պայմանագրի և համաձայնագրի հավելվածներով սահմանված դրույթներին համապատասխան: «ԱՅԹԻՐԵՍՈԻՐՍԻՍ» ՍՊ ընկերությունը նաև տրամադրել է պայմանագրային ծառայությունների մատուցմանը ներգրավված աշխատակիցների տվյալները:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 779-րդ հոդվածի համաձայն.*

*«2. Կատարման անհնարինության դեպքում, որը ծագել է պատվիրատուի մեղքով, ծառայությունները վճարվում են լրիվ ծավալով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով,*

*«ԱՅԹԻՐԵՍՈԻՐՍԻՍ» ՍՊ ընկերությունը ընկերությանը 14.02.2020 թվականին ուղղված գրությամբ (կցվում է) նշում է՝ «կրկին անգամ խնդրում ենք Ձեզ տրամադրել համակարգի բոլոր հասանելիությունները: Հասկանում և լավ տիրապետում ենք «փակ ցանց» հասկացողությանը և նշում, որ դա հնարավոր է իրականացնել ստեղծելով VPN փակ հասանելիություն, որը կապահովի տվյալների պահպանման գաղտնիությունը և միաժամանակ հնարավորություն կստեղծի հեռակա կարգով համակարգի կառավարման իրականացմանը, որպեսզի մեր ընկերությունը կարողանա ձեռնամուխ լինել իր պարտականությունների կատարմանը և խնդրում ենք մեր պաշտոնական փոստին ուղարկել առաջացած խնդիրները՝ դրանց լուծմանը ձեռնամուխ լինելու համար:» Սակայն, ընկերությունը այդպես էլ չի ապահովել «ԱՅԹԻՐԵՍՈԻՐՍԻՍ» ՍՊ ընկերության կողմից խնդրարկված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմանները, ուստի Պայմանագրով սահմանված ծառայությունները ենթակա են վճարման լրիվ ծավալով:*

*Այսպիսով՝ ընկերությունը ոչ միայն չի ապահովել «ԱՅԹԻՐԵՍՈԻՐՍԻՍ» ՍՊ ընկերության կողմից Պայմանագրով սահմանված պարտավորությունները իրականացնելու համար անհրաժեշտ պայմանները, այլև «ԱՅԹԻՐԵՍՈԻՐՍԻՍ» ՍՊ ընկերությանն է*

*ներկայացրել վերջինիս պայմանագրային պարտավորությունների շրջանակներից դուրս գտնվող պահանջներ:*

*Անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ համաձայնագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի «ժամկետ» սյունակում սահմանված է՝*

*«համաձայնագիրը ստորագրելուց հետո նվազագույնը 20 օրացուցային օրվա ընթացքում՝ ըստ պատվիրատուի պահանջի», ինչը համապատասխանում է ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերության պահանջին, որը սահմանում է.*

*«ը. կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում առաջին փուլի ժամկետը, պետք է սահմանվեն ապրանքների և ծառայությունների դեպքում առնվազն 20, իսկ աշխատանքների դեպքում՝ առնվազն 45 օրացուցային օր:»: Փաստորեն և պայմանագրով, և՝ օրենսդրությամբ «ԱՅԹԻՌԵՍՈՒՐՍԻՍ» ընկերությունն ունի նվազագույնը 20 օրացուցային օր պայմանգրով ստանձնված ծառայությունները մատուցելու համար, մինչդեռ 2020 թվականի փետրվարի 5-ից մինչև պայմանագրի լուծման ամսաթիվը ընկած ժամանակահատվածը չի գերազանցում 10 օրացուցային օրը:*

*Ելնելով վերոգրյալից կարելի է փաստել, որ պատվիրատուի գործողություններն իրավաչափ չեն: Ուստի, խնդրում ենք մերժել «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը:»:*

**4. <u>ՍՑ-LO-2020/66 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի և «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի միջև 26.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունները պետք է կատարվեն Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող Համաձայնագրով սահմանվող ժամկետներում:

«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի և «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի միջև 05.02.2020թ.-ին կնքվել է թիվ «ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

Համաձայնագրի թիվ 1 հավելվածի համաձայն՝ ծառայությունները պետք է կատարվեն համաձայնագիրը ստորագրելուց հետո նվազագույնը 20 օրացուցային օրվա ընթացքում՝ ըստ պատվիրատուի պահանջի:

www.gnumner.am համացանցային կայքում 14.02.2020թ.-ին հրապարակված թիվ «ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/3» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի և «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի միջև 05.02.2020թ.-ին կնքված «ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով գնման պայմանագիրը «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կողմից 14.02.2020թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի ուժով (խախտվել են սահմանված ժամկետները):

**5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3154-2020 գրությամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծրագրային համակարգի սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել

մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի և «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի միջև 26.12.2019թ.-ին կնքված թիվ «ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով պետական գնման Պայմանագրի շրջանակներում 05.02.2020թ.-ին կնքված թիվ 1 Համաձայնագրի թիվ 1 հավելվածի համաձայն՝ ծառայությունները պետք է կատարվեն համաձայնագիրը ստորագրելուց հետո նվազագույնը 20 օրացուցային օրվա ընթացքում՝ ըստ պատվիրատուի պահանջի:

www.gnumner.am համացանցային կայքում 14.02.2020թ.-ին հրապարակված թիվ «ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/3» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի և «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի միջև 05.02.2020թ.-ին կնքված «ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով գնման պայմանագիրը «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կողմից 14.02.2020թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի ուժով (խախտվել են սահմանված ժամկետները):

Սույն գործի փաստերի համաձայն, մասնավորապես՝ 05.02.2020թ.-ին կողմերի միջև կնքված Համաձայնագրի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ծառայությունների կատարման ժամկետը սկսել էր հոսել 05.02.2020թ-ից և պետք է լիներ նվազագույնը 20 օրացուցային օր, այն է՝ 26.02.2020թ.-ը ներառյալ: Բողոքներ քննող անձը հաստատված է համարում նաև, որ Պատվիրատուն Պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետով սահմանված ժամկետների խախտման հանգամանքը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետով սահմանված խախտումն արձանագրելու համար, անհրաժեշտ է այդ ժամկետի սպառված (վերջացած) լինելու հանգամանը: Այս փաստի առկայության պարագայում, միայն հնարավոր կլիներ արձանագրել ժամկետների և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուն մինչև Պայմանագրով սահմանված՝ Մասնակցի պարտավորությունների կատարման ժամկետի լրանալը՝ ժամկետների խախտման հիմքով, չէր կարող լուծել «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի և «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի միջև 26.12.2019թ.-ին կնքված թիվ «ՓՍՍ-ԳՀԾՁԲ-2020/3» ծածկագրով պետական գնման Պայմանագիրը, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին

մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

**Ո Ր Ո Շ Ե Ց**

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.03.2020թ.-ի թիվ 26/26-1/3154-2020 գրությամբ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/66 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**